

ՆՈՐ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԻՄԱԿԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ս. Ա. ԱՎԱԳՅԱՆ

Ա. ԱՍԱՐԱՆՈՅ

Այս բառը և նրա ասարնոց, ասրնոց հնչյունափոխված տարբերակները վկայված են Վայոց ձորի ԺԳ—ԺԴ դարերի երեք վիմական արձանագրություններում, որոնց՝ լուսանկարով հաստատված ստույգ վերծանությունները գրտնում ենք Ս. Բարխուդարյանի ժողովածուներում. բնագրերի մեզ հետաքրքրող հատվածները տեղադրում ենք այստեղ. Վաղաղնի վանքի ս. Կարապետ եկեղեցու փլատակների մեջ ընկած երեսապատման քարի վրա. Ես՝ Թաւրանս միաբանեցա սբ Կարապետիս եւ գնեցի ի Վաղաղնոյ զասրնոցին: Ը: Բաժնէ զմինն¹: Հերհերի վանքի Աստվածածին եկեղեցու աբսիդի վրա. Ես՝ Վարդան վարդապետս զասարնոցիս շարէֆն ի հիւսնէն գնեցի, ի սբ ուխտս տվի, թվ 208 (1308): Թանատի վանքի ս. Ստեփանոս եկեղեցու արևելյան պատին. Ես՝ Հասիկ շինեցի զասարանոցն եւ տվի Վարսգա սբ նշանիս... թվիս 24 (1311)²: Այս արձանագրությունները նախկինում հրատարակվել են բազմիցս, սակայն բոլոր ընդօրինակողները ասարանոց (ասրնոց, ասարնոց) բառը կամ բաց են թողել և կամ վերծանել իրականից զգալի չափով հեռացած և աղավաղված:

Առաջին ընդօրինակող Զալալյանցը իր գրքում մի հատվածը բաց է թողել, իսկ մյուսը վերծանել՝ զասրնոցիս շարէֆն³: Քաջբերունին երրորդ օրինակում ասարանոց բառը երկու մասի բաժանելով՝ կարդացել է զայս սրբանոցս⁴: Ալիշանը, հետևելով Քաջբերունուն և սրբագրելով նրա ընդօրինակությունը, վերջին երկու վկայությունները վերծանում է զսրանոցիս շարէֆն, զայս սրանոցս և վիճելի բառը բացատրում. սրանոց՝ աղորիք է, զորոյ շորորդ մասն գնէ⁵: Սիսուկը երկրորդ բնագիրը վերծանում է զսրանոցիս շարէֆն, իսկ երրորդը՝ շինեցի զամարանոցն⁶: Գ. Հովսեփյանը ստույգ կարդալով տառաշարքը, վերծանության մեջ համերաշխ է Սիսուկին և, ասարանոց բառի մեջ փորագրողի սխալ տեսնելով, առաջարկում է այն կարդալ ամարանոց⁷: Տարբեր է հասկացվել նաև բառի արտահայտած իմաստը. և հիրավի, ի՞նչ ունեցվածք են նվիրել վանքերին նվիրատուները: Ըստ Քաջբերունու ասարանոցը պետք է հասկանալ սրբանոց, թեև անհայտ է մնում վերջինիս ինչ լինելը: Սիսուկը Վարդան վարդապետի նվիրած սեփականությունը նրա կառուցած ջրաղացի շարէֆն է համարում, իսկ

1 Ս. Բարխուդարյան, Դիվան, պր. 2, Երևան, 1960, էջ 194:

2 Ս. Բարխուդարյան, Դիվան, պր. 3, Երևան, 1967, էջ 52, 77:

3 Ս. Զալալյանց, Ճանապարհորդություն, Բ, էջ 140:

4 «Արարատ», էջմիածին, 1889, էջ 104:

5 Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 114, 120:

6 «Материалы по археологии Кавказа», т. XIII, Москва, 1916, էջ 129, 130:

7 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք..., հատ. Գ, Նյու-Յորք, 1942—1943, էջ 78:

Հասկինքը՝ ամառանոցի շենքը: Ալիշանը, ինչպես տեսանք, երկու դեպքում էլ ասաբանոց, ասաբանոց ընթերցվածը ուղղում է սրանոց և նույնացնում աղորիֆի, աղացի հետ:

Ավելի հիմնավոր հարցը քննում է Ն. Ադոնցը՝ Գ. Հովսեփյանի «Խաղբակյանք կամ Պոռշյանք» աշխատության մասին գրած «Քննական տեղեկադրում», որ նա ներկայացրել է «Թարգմանաց — Դուրյան» գրական մրցանակի հանձնախմբին՝ իբրև կարծիք-գրախոսական: Այստեղ Ադոնցը, ի շարս այլ էական ուղղումների, առարկելի է համարում նաև Հովսեփյանի ամառանոց ընթերցումը և առաջարկում հիշյալ տառաշարքը վերծանել հասաբանոց, ծագած համարելով պարս. *hasar* -ստույց կամ նույն արմատի *h*, *s* հնչյունների դրափոխությամբ առաջացած քրդերեն *sahar* բառից, որ հեղինակի կարծիքով երկու դեպքում էլ կարող էր նշանակել սառցաբան, սառցատուն, այսինքն մառան⁸: Ասաբանոց բառի հավաստի վերծանությունների հեղինակ Ս. Բարխուդարյանը թեև հատուկ չի անդրադարձել նրա մեկնությանը, սակայն ժողովածուի առարկայական ցանկում իրավամբ բառը հոմանիշ է համարել ձիթահանֆին:

Ասաբանոց (ասաբանոց, ասրանոց) բառի հիշյալ վկայությունները ներկայումս գիտականորեն հրատարակված են, ուստի այդ տառաշարքերի ընթերցումը միանգամայն հավաստի է, ստուգվում է լուսանկարներով և որևէ կասկած չի հարուցում: Այդ պատճառով էլ բառիս նախկինում կատարված վերծանությունները և մանավանդ ստուգաբանության փորձերը դժվար է որևէ չափով ընդունելի համարել: Մի բան ակնհայտ է, որ ասաբանոց բառը տվյալ իրադրության մեջ արտահայտել է որևէ շահութաբեր ձեռնարկության իմաստ, քանի որ նվիրատուները մեր բերած առաջին երկու օրինակներում վանքերին նվիրել են ոչ թե ամբողջ ասաբանոցը, այլ նրա մի շուրջքը կամ :Ը: Բաժնե գմինն, այսինքն հաստատության եկամուտի որոշ մասը:

Թե ինչ հասութաբեր հաստատություն է եղել ասաբանոցը միջին դարերում, պարզում է ավելի ուշ շրջանի մի այլ վիճագիր, որ փորագրված է Վ. Ղարանլուի գյուղում գտնվող հին ձիթահանքի հարավային պատի մեջ ագուցված խաչքարի վրա. Կաման Այ Ղուկաս Ե եղբայրն իմ Աւանէս որդի ներսէսին շինեցաւ սրանոցս յիշատակ որդոց մերոց. թվ ՌՃ (1651 թ.)⁹:

Հեշտ է համոզվել, որ այստեղ հիշատակված սրանոցը քննության առարկա ասաբանոց բառի հնչյունափոխված ձևն է և նշանակում է ձիթատու հատիկներից ձեթ ստանալու արհեստանոց՝ ձիթահանֆ, որ միջնադարի վիճագրության մեջ բազմիցս հիշատակված է ձիթահանֆ, ձիթահանֆ, ձիթահանֆ, ձիթատուն տարբերակներով:

Սրանոց բառը նույն նշանակությամբ ներկայումս էլ գործածական է Արցախի և հյուսիսային Հայաստանի շրջանների մի քանի խոսվածքներում (Իջևվան, Շամշադին, Նոյեմբերյան, Կրասնոսելսկ և այլն): Առաջնորդ պատմական գյուղաքաղաքի հուշարձանների թվում պահպանվել է ԺԳ դարի միակամար մի կամուրջ, որը մինչև օրս էլ տեղացիների կողմից Սրանոցի կամուրջ է անվան-

⁸ Նույն տեղում, էջ ԻԲ, պատմաբան Լ. Բաբայանը նույնպես ասաբանոց > սրանոցը մատն է համարում (տե՛ս նրա «Հայաստանի սոց.-տնտես. և քաղ. պատմությունը XIII—XIV դարերում», Երևան, 1964, էջ 114):

⁹ Մ. Ս մ բ ա տ յ ա ն ց, Տեղագիր Գեղարքունի Մովաղարդ գավառի, Վաղպաա, 1895, էջ 538: Ե. Լ ա լ ա յ ա ն, Ն. Բալազետի գավառ, «Ազգագրական հանդես», 1908, 18, էջ 152:

վում՝ հավանաբար այն հնագույն ձիթահանքի անունով, որ ժամանակամերձ է կամուրջին և կառուցվել է նրանից ոչ հեռու, Կիրանց-ջուր գետակի ձախ ափին (գ. Գետաշեն, Իջևանի շրջան)։

Ասարանոց բառը գրական աղբյուրներում չի հանդիպում և թերևս այդ պատճառով նրա ստուգաբանությունը կամ բացատրությունը չենք գտնում հայերենի բառարաններում։ «Վաստակոց գրքի» հայերեն թարգմանության մեջ, որ ԺԳ դարի գործ է համարվում, հիշատակվում են մասարայ, մասարաֆար բառերը («զձիթին մասարսյսն և զջաղացանին և զամանսն սպրկիկ և անուշահոտ պարտ է առնել...», «եւ վաղն զինքն ի մասարաֆարն ի թեթեն աղա...», և այլն)¹⁰, որոնք վկայված իրադրությանը համապատասխան բացատրվել են նախ ՆՀԲ-ում¹¹, Ն. Բուզանդացու և Կարստի՝ միջին հայերենի անտիպ բառարաններում¹² և ապա՝ Հ. Աճառյանի Արմատական բառարանում¹³, Ըստ այդ մեկնության՝ մասարայ ծագում է արաբ. masara = մամուլ, ֆամիշ, մամիշ արմատից և տվյալ դեպքում նշանակում է ձիթահատիկ ծեծելու գործի, ձիթոց, «կոնֆածե կամ մաշտածե սանդ աղալոյ. կամ ծեծելոյ գծիթապտուղ...»¹⁴, այլև՝ «մեծ տաշտն, ի մեջ որոյ զխաղողն լցեալ ճմլին — հայերեն հնձան և արաբերեն մըսարէ»¹⁵, որտեղից և մասարաֆար = ձիթացի ֆար, ձիթահանաց ֆար։

Ասարանոց (ասարնոց, ասրնոց) ածանցավոր բառը կազմված է արաբ. ասար արմատից և անոց տեղ ցույց տվող հայ. ածանցից։ Ասար արմատը ծագում է արաբ. asara բայից, որ նշանակում է մամել, ճմլել, ֆամել, ըստ այդմ էլ ասարանոց = ձիթահատիկները մամելելու և ձեթ ֆամելու արհեստանոց, գործատուն, ձիթահանք։

Բ. Բ Ա Ր Ա Թ

Աշտարակի Մարինե հուշարձանի արևելյան պատին փորագրված ԶԿԶ (1317) թվակիր արձանագրության մեջ հստակ կարդացվում է բարաթ բառը, որն այլուստ հայտնի չէ և դուրս է մնացել հայերենի բառարաններից։

Այդ երկարաշունչ բնագրի միայն առաջին երեք տողերը, այն էլ առանց բարաթ բառի հիշատակության և անճանաչելի աղավաղված՝ հրատարակված են Շահխաթունյանցի տեղագրական գրքում, իսկ այնտեղից էլ անփոփոխ՝ «Վիճական տարեգրում»¹⁶։ Մեզ հետաքրքրող բառի իմաստը ստույգ մեկնելու նպատակով և նկատի ունենալով բնագրի հրատարակված շրջանը, մեջ ենք բերում սույն բառաբանության հետ առնչվող ընդարձակ հատվածը մեր վերծանությանը։ Կամաւ ամենայկալին Այ եւ ողորմութիւ պարուն Աղբուղային եւ Սիթի

¹⁰ «Գիրք վաստակոց», Վենետիկ, 1877, էջ 183, 184։

¹¹ ՆՀԲ, Բ, էջ 210։

¹² J. Karst, Wörterbuch des Mittelarmerischen historisch-etymologisch, Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող հայագետ Կարստի արխիվ, գործ 252, թղթ. 21, հետագա հղումներում՝ WBM, Ն. Բ յ ու զ ա ն դ ա յ ի, Բաղդիրք ստորին հայերենի ի մատենադրությանց ժԱ—ԺԷ դարուց, Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող մանրածապակեն, հետագա հղումներում՝ Բաղդիրք ստորին հայերենի։

¹³ Հ. Աճառյան, Արմ. բառարան, 4-րդ, էջ 851։

¹⁴ ՆՀԲ, Բ, էջ 210։

¹⁵ Ն. Բ յ ու զ ա ն դ ա յ ի, Բաղդիրք ստորին հայերենի, մասամբ բառի տակ։

¹⁶ Հ. Շ ա հ խ ա թ ու ն յ ա ն ց, Ստորագրություններ..., Բ, էջ 86, Վիճական տարեգիրք, էջ 159։

հարունին, ես՝ Յակոբ էրէց ի վանքս շինեցի հոյրատուն: Գ: դուռն ի պարսպին դռնէ, ի: տներ շինեցի եւ գամէն հոյրատանն տվի: Ով որ հանգչի գդուոն Լնի, հոյրատուն տան: Եւ պարոնայքն գայն տներոյն գամէն հարկ թողին. ոչ բարաթ, ոչ պարոն, ոչ ամիրայ, ոչ ձեռնաւոր, ոչ զգիր..., ոչ ով հետ տներոյն րան շունի..., և հետեւում է անեծքի շարադրանքը:

Արդ, ինչպես հասկանալ տվյալ իրադրութեան մեջ բարաթ-ը: Պարսկերէն *barat* բառը մուրհակ, պարտամուրհակ, փոխանակամուրհակ նշանակութեամբ առաջին հայացքից կարծես թե անհամաձայն է տվյալ վկայութեանը, քանի որ բարաթ բառը այստեղ հիշատակված է ոչ թե վերացված հարկերի կամ պարտութեան շարքում, այլ դրանք հավաքող կամ իրականացնող պաշտոնյաների թվարկման մեջ՝ ոչ բարաթ, ոչ ամիրայ, ոչ ձեռնաւոր, ոչ զգիր... և այլն, որ մտածել է տալիս, թե բարաթ-ը նույնպես կարող է հարկերի և տուրքերի հետ առնչություն ունեցող պաշտոնյա նշանակել:

Մոնղոլական պետութեան հարկային քաղաքականութեան ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բարաթ տերմինի տակ պետք է հասկանալ վճարման մի առանձին եղանակ կամ փաստաթուղթ, որ առնչվում էր մոնղոլական հարկերի և տուրքերի գանձման կապալառուական կարգի հետ: Համաձայն այդ կարգի, պետական, արքունական հարկերի նահանգական կապալառուները պարտավորվում էին հարկերի կապալային վարձը իրականական գանձարանը մուծել կամ նախօրոք, մինչև հարկատու բնակչությունից հարկերի լիակատար գանձումը, կամ որոշ ժամանակի ընթացքում՝ մաս-մաս և կամ մոնղոլական պետության կենտրոնական դիվանի բաց թողած հատկացագրերի կամ բարաթների դիմաց, որոնք տրվում էին երկրի նահանգներում երթևեկող պետական պաշտոնյաներին, էլշի-սուրհանդակներին, արտոնյալ վաճառականներին և երթևեկող այլ անձանց՝ հասանելիք գումարները տեղերում ստանալու համար¹⁷:

Հարկերի կապալառուները պարտավոր էին այդ հատկացագրերը կամ բարաթները ներկայացնողներին վճարել այնտեղ նշանակված գումարները՝ իհարկե, տվյալ նահանգի հարկերի կապալավարձի դիմաց: Հարկերի գանձման այսպիսի եղանակը գանազան շարաշահումների և կամայականությունների դուռ էր բաց անում թե՛ բարաթ ունեցողների և թե՛, մանավանդ, հարկերի կապալառուների համար, որոնք, առիթից օգտվելով, հաճախ բնակչությունից հարկերը կրկնակի չափերով կամ մի քանի անգամ էին գանձում:

Հավանաբար, նույն բարաթ տերմինի կիրառությունն է ականարկում նաև Անիում, Մանուշեի մզկիթի պարսկերէն արձանագրության մեջ մի քանի հարկերի շարքում հիշատակված ապօրիճի վճարումներ կապակցությունը, որ ակադ. Բարտոլդը թարգմանել է незаконные ассигнования, առանց բացահայտելու տերմինի բովանդակությունը. ահա Աբու-Սաիդ-Բահադուր խանի հրովարտակի այդ հատվածը. ...как перед этим в городе Ани и других областях Грузии по причине (податей) калан, немери, незаконных ассигнований и (подати) тарх поборы производили и применяли насилие¹⁸:

Այստեղից պարզվում է, որ բարաթ-ը մի հատկացազից կամ հանձնարա-

¹⁷ См. А. Али-Заде, *Уд. ш.», т. 2, 195*, И. П. Петрушевский, *Земледелие и аграрные отношения в Иране XIII—XIV вв.* М.—Л., 1960, т. 2, 366:

¹⁸ В. Бартольд, *Персидская надпись*, СПб, 1911, т. 2, 7:

րագիր է, որով մոնղոլական դիվանը տեղերում զանազան վճարումներ էր կատարում՝ կապալով տրված հարկերի և տուրքերի կապալավարձի հաշվին:

Դառնալով քննարկվող արձանագրությանը, պետք է կարծել, որ Մարինի վանքի պատրոններ Զաքարյան իշխանները Յակոբ երեցի շինած և վանքի հյուրանոցին նվիրած 30 սենյակները ազատել են բոլոր տեսակի հարկերից, ըստ այդմ հատուկ շեշտվել է, թե հարկ չի տրվելու ոչ հարկահան պաշտոնյաներին (ամիրայ, ձեռնաուր, զգիր և այլն) և ոչ էլ հարկերի կապալավարձի դիմաց՝ բարաթ=հատկացագիր, հրամանագիր ներկայացնողներին:

Գ. ԴՌՆԱԳԻՐ (ՄԵՍ ԵՎ ՓՈՔՐ)

Անիի մոնղոլական շրջանի արձանագրություններում մի քանի անգամ հիշատակվում է այս տերմինը՝ վերացվող այլ հարկերի ու տուրքերի շարքում: Դրանցից առաջինը քաղաքի գլխավոր գարպասի արձանագիրն է, որով Անիի պարոններ Գրիգորը և Յովհաննեսը դիջում կամ իջեցնում են քաղաքի բնակիչներից գանձվող մի շարք հարկեր. զամենայն հաբկապահանջութիւն եբարձին՝ զմուր եւ զթաղաւ, զհեծել, զղափշուն, զախուրթամարն եւ զղոնագիրն ի բաժ ի ղաղմա եւ ի մուսլաշիութ ղարձուցին¹⁹...: Նույն ղոնագիրը թողնելու մասին է նաև Անիի պատրոն Խուանդա իշխանուհու արտոնագիրը՝ փորագրված ԶԿԹ (1320) թվականին, Առաքելոց եկեղեցու զավթի պատին. ի մեր հայրենիք փալաֆս ի յԱնի թողաք զկովերոյն եւ զիշանուն զհամբերելէն եւ զղոնագիրն մեծի եւ զփոքու...²⁰: Դոնագիր տուրքի երրորդ հիշատակությունը գտնում ենք Անիում, Ֆանուլեի մզկիթի պարսկերեն արձանագրության մեջ, որտեղ շարադրվում է Պարսկաստանի մոնղոլ տիրակալ Աբու-Մաիզ-Բահադուր խանի եառլեթ-հրամանագիրը՝ կալան, նեմերի, քարխարքունական հարկերի հետ նաև տեղական ծագում ունեցող ղոնագիրը (ըստ Վ. Բարտոլդի տառադարձության՝ трнагир, тернагир) վերացնելու մասին. «...люди из простого народа рассеялись, старосты города и областей по причине (податей) калан и тернагир имущество недвижимое и движимое и семьи покинули и ушли...»²¹:

Դոնագիր բառը տեղ չի գտել հայերենի բառարաններում, սակայն նրա նավանական բացատրությունը տալիս են Անիի վերոբերյալ բնագրերի ուսումնասիրողները, ըստ որում այդ բացատրության հիմքում ընկած է ոչ այնքան տերմինի էության բացահայտումը, որքան նրա արտաքինի, բառակազմական, ստուգաբանական ծագումը (ղոնագիր <ղուն-ա-գիր=ղուն գիր): Այսուհանդերձ, բոլոր հետազոտողներն էլ մի կետում համերաշխ են. ղոնագիրը քաղաքի զարպասների կամ դռների առջև գանձվող տուրք էր, անցահարկ, որ առնվում էր քաղաք մուտք գործող անասուններից ու մթերքներից:

Առաջինը տերմինը քննել է Մ. էմինը և Անիի, Կարսի և մերձակայքի արձանագրությունների 1881 թ. հրատարակած ուսերեն ժողովածուում մեր առաջին օրինակի ղոնագիրը թարգմանել՝ подворная подать = ծխահարկ, երղահարկ, որ, ինչպես պարզվեց այլ վկայություններից, ակնհայտ վրիպում է:

19 Չ. Օրբելի, Դիվան, պր. 1, էջ 1:

20 Նույն տեղում, էջ 27:

21 В. Бартольд, Персидская надпись... էջ 7:

նույն տեսակետն է հայտնել նաև պրոֆ. Ս. Նդիազարովը²²։ Ակադ. Վ. Բարտոլդը Մանուշեի մզկիթի պարսկերեն արձանագրության *тернагир*-ը ն. Մառի տուրքի համարելով տերմինի մեծ և փոքր բնութագրումը²³։ Կ. Բասմաջյանը, ղոնագիրը հասկանում է՝ ընդհանրապես քաղաքի մուտքի իրավունք, անցանահարկ²⁴։ Հետագա ուսումնասիրողները, տարբեր առիթներով դառնալով ղոնագիր բառին, կրկնել են Բարտոլդի մեկնությունը, որը և լայն ընդունելություն է գտել պատմագիտական գրականության մեջ։

Ղոնագիր տուրքային տերմինի հիշյալ մեկնությունները հեռու են սպառնիչ լինելուց, քանի որ այդ դեպքում անբացատրելի է մնում, նախ ղոնագրի և բաժի տարբերությունը, որ, ինչպես հայտնի է, նույնպես անցանահարկի նըշանակություն ուներ Անիում, և ապա մեծ ու փոքր ղոնագրի էությունը, որ բոլոր պատմաբանների մոտ էլ մինչև օրս չպարզված հարց է մնում։ Եվ իրոք, եթե ղոնագիրը քաղաքի դարպասների մոտ գանձվող անցահարկն է, ապա այդ դեպքում ինչպես հասկանալ անցահարկի մեծ կամ փոքր բնութագրումը։ Կարելի էր կարծել, թե տվյալ իրադրության մեջ մեծ կամ փոքր հատկանիշները նույն իմաստն ունեն, ինչ մեծ կամ փոքր շառ, մեծ կամ փոքր խառն տերմիններում, որոնք հիշատակված են Շիրակավանի և Աշտարակի արձանագրություններում և արտահայտում են մեծի դեպքում՝ տվյալ հարկի (շառ, խառն) արժույթը, պետական բնույթը, նրա գանձումը արժույթի օգտին, իսկ փոքրի դեպքում՝ նույն հարկի տնօրինությունը տեղական կալվածատիրոջ կամ իշխանի կողմից։ Սակայն ակներև է, որ ղոնագիր անցահարկի համար նման բացատրությունը անհավանական է, և այդ պատճառով բոլոր հետազոտողների համար մեծ կամ փոքր ղոնագիրը անհասկանալի է մնացել (Բարտոլդ, Մառ, Մանանդյան և այլն)։

Մեզ թվում է՝ ղոնագիրն մեծի և գլխավոր վկայության վերծանությունը ճշգրտման կարիք է զգում։ Նորից ուշադիր քննելով պատրոն Խուանդայի արտոնագիրը, որ վերջերս հրատարակվեց Ակադ. Հ. Օրբելու անթերի ընդօրինակությամբ, համոզվում ենք, որ այդ կապակցությունը ճիշտ չի հասկացվել, որի հետևանքով և առաջացել է մեծ և փոքր ղոնագիր անիրական և անբացատրելի տերմինը, որ քերականորեն չի արդարացվում։ Իրականում, քարի վրա պարզ փորագրված է՝ ղոնագիրն մեծի և գլխավոր, որ անվիճելի նշանակում է մեծի և փոքրի ղոնագիր և պետք է հասկանալ ղոնագիր՝ մեծից և փոքրից։ Ուսումնասիրողների ուշադրությունից վրիպել է, որ ղոնագիրն հայցական հոլովածակի վրա դրված ածականները (մեծ, փոքր) չէին կարող դրվել սեռական հոլովով (մեծի և գլխավոր), եթե նրանք որոշիչների դեր կատարեին։ Մյուս կողմից, որոշիչի անհամաձայնությունը որոշյալի հետ ըստ հոլովի առավել կամ պակաս չափով սովորական է ժամանակի գրական լեզվում՝ գրաբարում և վիմական արձանագրություններում, մինչդեռ հակառակը, երբ որոշյալը դրված է անփոփոխ ձևով, իսկ որոշիչը թեք հոլովածակով, անսպասելի է նույնիսկ միջին հայերենում կամ ուշ շրջանի վիմագրության մեջ։ Այստեղից ակնհայտ է, որ մեր

²² М. Эмин, Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего М., 1881. т. 7; С. Егиазаров, Исследования по истории армянского права, вып. I. Кнеб., 1919, т. 39.

²³ В. Бартольд, *նշվ. աշխ.*, էջ 42.

²⁴ К. Basmadjian, *նշվ. աշխ.*, արձ. № 24, 87.

օրինակում զոռնագիրն մեծի և զփոփու պետք է հասկանալ այնպես, ինչպես կարդացվում է բնագրում՝ մեծի և փոփու զոռնագիր, այսինքն մեծի և փոփու պետք է համարել ոչ թե որոշիչներ, այլ հատկացուցիչներ՝ առաջացած փոխանուն ածականներից: Այս բացատրության դեմ ոչ մի չափով չի կարող առարկել զ նախդիրի կրկնությունը զփոփու բառի հետ, քանի որ այդ իրողությունը սովորական է ժ—ժԳ դարերի վիճագրական հուշարձաններում:

Ինչ մնում է հուանդայի արտոնագրի մեկնաբանությանը, ապա մեր շտկումից հետո զոռնագիրն մեծի և զփոփու պետք է հասկանալ ոչ թե մեծ և փոփու զոռնագիր, այլ մեծի և փոփու զոռնագիր, այսինքն խոշոր և մանր անասունների զոռնագիր, անցատուրֆ, անցաճարկ²⁵:

Եվ իրոք, արձանագրության հեղինակը զոռնագրի մասին փորագրելիս ավելորդ է համարել նորից շեշտելու մեծ և փոփու անասունների անվանումները, քանի որ մինչ այդ, այլ հարկի առիթով արդեն նշել է՝ թողաք զկովերոյն եւ զիշանուն շամբրելէն եւ (զոռնագիրն մեծի և զփոփու):

Դ. ՁԻԱԻԼԱԽ (ձի ալախ)

Այս կապակցությունը առնում ենք Վաչուտյանց Չրքինի (բուն անունը՝ Քէոդոս) ՉՂԲ թվականի արձանագրությունից՝ փորագրված Կարբիի զանգակատան հարավային պատին, արտաքուստ: Բնագիրը հրատարակված չէ և առայսօր անծանոթ է բանասիրությանը, այն զգալի հետաքրքրություն կարող է ունենալ ոչ միայն պատմական Ամբերդ գավառի տերերի՝ իշխանական նշանավոր տոհմի՝ Վաչուտյանների վերջին շառավիղների տոհմագրությունը և գործունեությունը լուսաբանելու համար, այլև ժամանակաշրջանի (ժԳ—ժԴ դդ.) սոցիալական իրադրությունը, մասնավորապես մոնղոլական հարկային քաղաքականությունը պարզելու առումով: Չրքինի արտոնագիրը միանգամայն անվթար է պահպանվել և նրա վերծանությունը դժվարություններ չի հարուցում, ահա բնագիրը մեր ընդօրինակությամբ.

Շնորհիւն Այ, ես՝ Չրքինս, որդի Քրդին, տէր Անբերդոյ գաւառի անիրաւումն տեսա, որ զնանապարհորդի ձիալախ տաին, մեք զայս արձան գրեցաք, որ այլ ի Կարբի հանպորդի ձիալախ չտան: Կատարիչք գրոյս աւրհնին յԱյ եւ հակառակողքն պատուհասին եւ նալաք լինին: Թվ. ՉՂԲ (1343 թ.):

Արձանագրի բովանդակության քննությունը մի կողմ թողնելով, ցանկանում ենք պարզել ձիալախ կամ ձի ալախ բառերի իմաստը: Բառս այլուր վրկայված չէ և չի բացատրվում հայերենի բառարաններում: Աչքի անցկացնելով ժԳ—ժԴ դարերի մոնղոլական իլխանության նվաճված երկրներում կիրառվող հարկային և պարհակային անվանումները, մենք կանգ առանք յամ (եամ, yam) և ուլախ (ulag) տերմինների վրա, որոնց նշանակության պարզաբանումը կարող է նպաստել նաև քննվող ալախ կամ ձիալախ բառերի մեկնաբանությանը: Յամ (եամ) էին կոչվում այն փոստային կայանները, որոնցում երթևեկելիս իջևանում էին մոնղոլական սուրհանդակները (էլչիներ), դեսպան-

²⁵ Պատմաբան Լ. Բաբայանը այն միտքն է հայտնում, թե զոռնագրի մեծ և փոփու բնութագրումը վերաբերում է Անիի մեծ և փոփու դռներին կամ դարպասներին, ըստ այդմ, «մեծ դռներից ներմուծվող և արտահանվող (?) ապրանքներից զանձվել է «մեծ դռնագիր», իսկ փոքրերից՝ «փոքր դռնագիր»: (Տե՛ս Լ. Բ ա բ ա յ ա ն, նշվ. աշխ., էջ 497—498):

ները, պետական պաշտոնյաները, հարկահավաքները, արտոնյալ վաճառականները և այլն: Այդ յամերում կամ փոստային կայաններում պահվող հեծնելու, լծելու կամ բեռնակիր ձիերը, որոնցով կատարվում էին երթևեկությունները, ուլախ (ulag) էին կոչվում²⁶: Տեղական հարկատու բնակչությունը գոյություն ունեցող բազմազան ու ծանր հարկերն ու տուրքերը վճարելուց և պարհակները կատարելուց բացի, պարտավոր էր նաև ապահովել բազմաթիվ երթևեկներին պարենամթերքով, օթևանով և ճանապարհի պաշարով: Բացի դրանից, ինչպես վկայում են պատմագրական աղբյուրները, հարկատու բնակչության ուսերին էր ընկած նաև փոստային կայանների (յամ) շինարարության և երթևեկներին ձիերով ու պարենով ապահովելու ծախսերի ծանրությունը: Նկատի ունենալով իլիսանական պետության մեջ երթևեկների, հատկապես էլշիների (սուրհանդակ) և հարկահավաքների արտակարգ մեծ քանակությունը, պետք է կարծել, որ նրանց՝ ձիերով, պարենով ու անասնակերով ապահովելը ամենածանր պարտավորություններից մեկն է եղել բնակչության համար: Այսպիսով, քննարկվող արձանագրության մեջ հիշատակված ձի ալախ-ը կամ ձիալախ-ը մոնղոլական ulag պարտույթի առաջին և միակ վկայությունն է մեր աղբյուրներում:

Ալախ բառի ծագումը դնում ենք մոնղոլ. չաղայաթ. ուլդուր. улак արմատից, որ բառացի նշանակում է փաշող կենդանի, գրաստ. բեռնակիր անասուն²⁷: Փոխառյալ արմատի ուլ> ալ, փոփոխության համար համեմատելի է՝ դուկատ> դալկատ, ուղղորդ> ալղորդ կամ անմիջականորեն կամ ալ> ա անցումով. թագունի> թագոնի, Սաղուն> Սաղոն, Արգուխաթուն> Արգոխաթուն, Մուշեղ> Մոշեղ, կուղպակ> կողպակ և այլն²⁸:

Ե. Շ Ո Ր Տ Ա Յ

Այս տառաշարքը հանդիպում է Տարսայիձ Օրբելյանի ԶԻԳ (1274) թ. ընդարձակ արձանագրության մեջ, որ փորագրված է Ամաղուի վանքում իր կառուցած՝ Սմբատ իշխանի դամբարանի հյուսիսային պատին, արտաքուստ: Բնագիրը հրատարակվել է քանիցս, սակայն բոլոր ընդօրինակություններին մեջ առավել հարազատը և հավաստին, անշուշտ, Ս. Բարխուդարյանի վերջերս լույս տեսած վերծանությունն է, որտեղ մեզ հետաքրքրող հատվածը կարդացվում է. գՀալիձորոյ հակն սահմանէցաք ի տարումն վացսուն սպիտակ տա, այլ ազատ է յամէն հարկաց. այլ ոչ ամիրայի, ոչ պարոնի, ոչ ձեռնաւորի ոչինչ հաշի շկա հետ Հալեձորոյ. ոչ ի շոր տայ եւ ոչ այլ ոչ ում...²⁹, այնուհետև շարադրվում է անեծքի ձևակերպումը:

Թեև ամբողջ արձանագրությունը փորագրված է խոշոր, խորաքանդակ և գեղեցիկ տառաձևերով, և համարյա անխաթար է մնացել, նրա ստույգ վեր-

²⁶ Տե՛ս В. В. Бартольд, Сочинения, т. I, Москва, 1963, էջ 536, А. Али-Заде, նշվ. աշխ., էջ 237:

²⁷ Տե՛ս Уйгурско-русский словарь, под. ред. Ш. Кибирова и Ю. Цунвазо, Алма-Ата, 1961, էջ 202: Տերմինի մասին ավելի մանրամասն տե՛ս И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI начале XIX в. Ленинград, 1949, էջ 275, նույնի՝ Земледелие..., էջ 338:

²⁸ Տե՛ս ն.՝ Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 158, 170, 208, 192, 2. Օրբելի, Դիվան, 1. էջ 12, 50: 1. Քարխուդարյան, Դիվան, 3, էջ 51, J. Karst, Historische Grammatik des Kilikisch-armenischen, Strassburg, 1901, էջ 57—60:

²⁹ Ս. Բարխուդարյան, Դիվան, պր. 3, էջ 345:

ծանոթությունը որոշ դժվարություններ է հարուցում և լիակատար չէ նույնիսկ Ս. Բարխուդարյանի առավել կատարյալ ընդօրինակության մեջ:

Այսպես, խիստ անորոշ է ոչ ի շուր տալ եւ ոչ այլ ոչ ում նախադասությունը, որի բառանշաւումը և մանավանդ հավելումները առարկության տեղիք են տալիս:

Ալիշանը, հետեւելով առաջին ընդօրինակող Ս. Զալալյանցին, տառաշարքը վերծանել է ոչ շուր տալ, ոչ այլ ոչ ում և շուր տալ-ի վրա հարցական նշան դնելով, կապակցությունը անբացատրելի է թողել³⁰: Սիսուեք, շնայած գրքի մեջ տեղավորված հաջող լուսանկարին, բնագրի ընթերցանության մեջ ավելի է հեռացել իրականից՝ ոչ շուր տալի, ոչ այլ ոչ ում և ընդգծվածը թարգմանել. никому не обязан платить дань материалами³¹: Անհամողիչ է թվում նաև Ս. Բարխուդարյանի վերծանությունը, ըստ որի ի շուր բառը պետք է հասկանալ իշաւոր > իշուր (հմմտ. ձիաւոր) և դիտել իբրև մարդու և գրաստի պարհակի հիշատակություն, քանի որ այդ վերականգնման դեմ առարկում է ամենից առաջ մեջ բերված հատվածի երկրորդ մասը՝ ոչ այլ ոչ ում, որ ոչ մի ձևով չի կապվում նախադասության առաջին մասի հետ (ոչ ի շուր տալ եւ...):

Նախ՝ քննության ենթակա տառաշարքի ընդօրինակության մասին. թե՛ Ս. Բարխուդարյանի և թե՛ մանավանդ Սիսուեքի գրքում տեղավորված լուսանկարներում սլարդ երևում են քննվող հատվածի հետևյալ գրերը. ոչ շուր տալի ոչ այլ ոչ ում: Ս. Բարխուդարյանը բառաբաժանում կատարելուց առաջ առկա տառաձևերին ավելացրել է երկու գիր՝ ի գիրը շ-ից առաջ և ե-ն տալ-ից հետո, ըստ այդմ ստացվել են իշուր, եւ բառերը, սակայն այս դեպքում վերծանողի ուշադրությունից վրիպել է, որ ե-ն ավելացնելուց հետո էլ եւ չի կարդացվի, քանի որ քարի վրա հաջորդ դիրք պահպանվել է ոչ թե ւ, այլ հստակ երևացող ի:

Արձանագրության ողջ շարադրանքից երևում է, որ մեջ բերված հատվածը պետք է արտահայտեր ոչ թե Սիրանես ճարտարապետին «հայրենիք» տրված Հալիժոր գյուղի հարկերի կամ աշխատապարհակների անվանումը, ինչպես ստացվում է Ս. Բարխուդարյանի վերծանությունից, այլ այն հարկահավար պաշտոնյաների թվարկումը, որոնց միջամտությունից և հարկապահանջությունից ազատվում էր Հալիժորը՝ Տարսայիճ Օրբելյանի այս հրամանագիր-կալվածագրով: Բացի գրանից՝ քննարկվող տառաշարքերից առաջ Տարսայիճը արդեն սահմանել է Սիրանեսի սեփականությունը դարձած Հալիժորի հարկերի չափը (ի տարումն վացսումն սպիտակ տա, այլ ազատ է յամէն հարկաց), ուստի շարունակության մեջ նա, բնական է, չէր կարող նորից անդրադառնալ այդ օրինականացմանը: Ընդհակառակը, հետագա շարադրանքը մինչև անեծքի ձևակերպումը, տալիս է հարկերի և տուրքերի գանձման հետ առնչություն ունեցող այն պաշտոնյաների անունները, որոնք իրավասու չեն խախտելու Հալիժորի հարկատվական սահմանված վիճակը՝ գյուղը Սիրանեսին նվիրելուց հետո: Այդ ընդհանուր կոառնումից ելնելով՝ առաջարկում ենք քննվող հատվածը ընթերցել այնպես, ինչպես պահպանվել է իրականում և հստակ երևում է լուսանկարի վրա, այսինքն առանց հավելումների կամ վերականգնումների. ոչ շուրտալի, ոչ այլ ոչ ում, ըստ այդմ շուրտալ (ի) տառաշարքի մեջ տեսնել ոչ թե տուրքային կամ պարհակային հասկացություն (ըստ Բարխուդարյանի՝

³⁰ Ալիշան, Սիսուեք, էջ 191: Զալալյանց, ճանապարհորդություն, Բ, էջ 172:

³¹ «Материалы по археологии Кавказа», էջ 183:

իշուր <իշաուր>), այլ դրանց իրականացման հետ առնչվող որևէ պաշտոնյայի անվանում, հար և նման դրանից առաջ հիշատակվող մյուս անվանումներին՝ ոչ ամիրայի, ոչ պարոնի, ոչ ձեռնաուրի... ոչ շուրտայի, ոչ այլ ոչ ում: Ծիշտ է, ոչ շուրտայի, ոչ այլ ոչ ում հատվածը անջատվում է նախորդ թվարկումից ոչինչ ճաշի չկայ ճեստ Հալեծուրոյ բառերով և կարող է առարկել առաջարկվող վերծանության դեմ, սակայն մեր կարծիքով այդ ընդհատումը պետք է բացատրել նրանով, որ փորագրողը կամ բնագրի հեղինակը ըստ հիերարխիայի նշելով պաշտոնյաներին՝ աշխատել է շուրտայ-ին առանձնացնել մյուսներից. գուցե և ինչ-որ ձևով շեշտել նրա առանձնակի վիճակը կամ սկզբում թվարկման մեջ բաց թողնելով շուրտայ-ին՝ ավելացրել են հետո:

Արդ, ինչ է նշանակում շուրտայ/ նորագյուտ բառը. ժամանակակից արաբերենում sorta արմատը արտահայտում է ուտիկան բառի իմաստ և թե՛ հնչյունային և թե՛ իմաստային առումով լիովին ծածկում քննության առարկա շուրտայ բառը³²: Բառիմաստի զարգացման տեսակետից կարելի է նկատի առնել նաև նույն բառի մինչմոնղոլյան շրջանից վկայված šurta տարբերակը sahib-aš-šurat (զորախմբի պետ) կապակցության մեջ, որը միաժամանակ արտահայտում է նաև «խալաֆի զինվորական պետի» նշանակություն³³:

Ակադ. Բարտոլդը surta (հոգն. surat) բառը ծագած է համարում հունարեն χορτα նույնանշանակ բառից³⁴:

Գալով մեր բնագրի վերծանությանը, պետք է հավանական համարել, որ շուրտայ արաբերենից փոխառյալ բառը ԺԳ—ԺԴ դարերում նշանակել է ուտիկան, ուտիկանակա պաշտոնյա, որը անմիջական առնչություն ուներ հարկերի գանձման և պարհակների կատարման հսկողության հետ:

2. Ս Ա Լ Ո Ւ Ք

Այս նորագյուտ բառը միայն մեկ անգամ վկայված է հայոց խոսրովանուշ թագուհու ՆԸ թվականի (959) մի արձանագրության մեջ, որով վերացվում է բնակչությանից գանձվող հարկերից մեկը՝ զմանկանց շաբիյաուս: Խոսրովանուշ թագուհու այդ արտոնագիրը փորագրված է մի երեսապատման սրբատաշ քարի վրա, որը հայտնաբերվել է 1912 թ., հնագիտական արշավախմբի ջանքերով Միլի ձորում, Ազատ գետի հոսանքներից ոչ հեռու Քյոփրիկուլախ գյուղատեղի բազիլիկ եկեղեցու մոտ:

Արձանագրությունը, Վանստան հուշարձանախմբի մնացած վիմագրերի հետ ժամանակին հավաքել, ընդօրինակել և տպագրության էր պատրաստել հիշյալ արշավախմբի ղեկավար, հայ վիմագրության երախտավոր Աշխ. Քալանթարը, սակայն դեպքերի բերումով այդ հրատարակությունը չիրականացավ և Վանստանի նորահայտ, հայագիտության համար շատ կարևոր նշանակություն ունեցող վերծանությունները մնացին հնագետի արխիվում, որ պահվում է ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում:

Սակայն այս դիտողության նպատակը խոսրովանուշ թագուհու նորագյուտ արտոնագրի գիտական հրատարակությունը կամ առավել ևս նրա մանրամասն վերլուծությունը չէ, որ վերծանողի անկապտելի իրավունքն է, այլ նրանում

³² См. X. К. Баранов, Арабско-русский словарь. М., 1962, էջ 502:

³³ См. В. В. Бартольд, Сочинения, т. I, М., 1963, էջ 287:

³⁴ Նույն տեղում, էջ 287, տողատակ:

Հիշատակված սալուի բառ-տերմինի նշանակության պարզաբանումը, որ չի հանդիպում Աշխ. Քալանթարի ծանոթագրություններում և անծանոթ է հայադիտությանը, Ընդամին, մեր բառաքնության համար հիմք է ծառայել բնագրի այն ընդօրինակությունը և վերծանությունը, որ տալիս է Քալանթարը, թեև մեզ հետաքրքրող տառաշարքերի ընթերցումը, այսուհանդերձ, ստուգել ենք արձանագրության լուսանկարի վրա:

Նախ արձանագրության ժամանակի մասին. Քալանթարի ընդօրինակության մեջ և լուսանկարի վրա տողասկզբին հստակ կարդացվում է ՆՀԵԻԸ ԹՈԻ, որ պետք է վերծանել՝ ՆՀԸ թուականին, այսինքն 1029 թ. (478+551): Սակայն այդ թվին արդեն չկային ոչ հոսսրովանուշ թագուհին (մեռ. 980 թ.) և ոչ էլ արձանագրության մեջ հիշատակված նրա հարազատները՝ ամուսին Աշոտ Գ Ողորմած թագավորը (իշխել է 954—977 թթ.), որդիներ Գագիկը (989—1020), Սմբատը (979—989) և դուստր Կատան: Պատմությունից հայտնի է, որ հոսսրովանուշ թագուհին կառուցել է Հաղբատի և Սանահնի վանքերը (957—967 թթ.) և թողել երկու արձանագրություն՝ Տեկորում Նի (971) թ., սահմանել է շարիատ հարկի չափը և Թալինում, բնագիրը խաթարված, անհասկանալի, բայց թվագիրը՝ ՆԼ (981 թ.), որ Աճառյանը իրավամբ ուղղում է ՆԸ (959)³⁵:

Կարծում ենք, մեր քննության առարկա արձանագրության թվագիրը՝ ՆՀ եւ Ը պետք է վերծանել Ն ԻՆԱՅՈՅ եւ Ը թովականին՝ և այդ դեպքում կստացվի ՆԸ (959) թվականը, որ համապատասխանում է բնագրում հիշատակված անծերի ժամանակագրությանը³⁶:

Սալուի բառը կարդացվում է հոսսրովանուշ թագուհու արտոնագրի անեծքի ձևակերպման մեջ, որ ամբողջովին դնում ենք այստեղ Քալանթարի վերծանությանը. Արդ, որ հակառակ կա այս գրոս կամ Բագրատունի, կամ ազատ, կամ սալուի նգովեալ էդիցի... հոգով եւ մարմնով եւ Բագրատունի ազգիս մեղացն տր եդիցի առաջի Այ, իսկ կատարիչի հրամանաց իմոց սուրհնեալ եդիցին...

Տառակցումների լայն կիրառությունը կարծես թե առարկում է արձանագրության թվագրման դեմ, սակայն լուրջ հիմքեր չի տալիս նրա իսկությունը կասկածի տակ առնելու համար, քանի որ արձանագրության հնագրական կերպարը լիովին հաստատում է, որ նրա փորագրումը ժամանակակից է նրանում հիշատակված անձանց և դեպքերին: Արդ, ինչպես բացատրել սալուի բառը: Ինչպես տեսանք, այս բառը հիշատակված է անեծքի բանաձևում, այնպիսի կապակցության մեջ, որտեղ թվարկվում են Բագրատունյաց Հայաստանի հասարակության սոցիալական շերտերը՝ սկսած ազնվականության ամենաբարձր դասից՝ Բագրատունիներից կամ Բագրատունի ազգից և վերջացրած սալուիններով, որ ամենայն հավանականությամբ բնակչության ամենաստորին շերտն էր, ըստ Մանանդյանի բնորոշման՝ աշխատող, արտադրող և շահագործվող շերտը:

Այս երկու բևեռների արանքում հիշատակված է ֆեոդալական Հայաստանի հասարակության միջին դասը՝ ազատները:

Այստեղից, մեզ թվում է, հոսսրովանուշ թագուհու արձանագրության մեջ ընդհանուր գծերով հառնում է ժամանակի հասարակության սոցիալական հիե-

³⁵ ՏԵՂՍ Հ. Ա Տ ա ռ յ ա ն, Անձն. բառարան, Բ, էջ 538:

³⁶ Աշխ. Քալանթարը առաջարկում է թվագիրը կարդալ ՆԺԸ (969 թ.), սակայն քարի վրա տառնավորը պարզ երևում է ոչ թե Ժ, այլ Հ, ուստի վերծանողի այս վերականգնումը արգարացված չէ:

յարիսիայի պատկերը՝ Բագրատունի, ազատ, սալուֆ, ըստ որում, վերջինս իր բովանդակությամբ հավանաբար համապատասխանում է հայկական աղբյուրներում հայտնի ուսմիկ կամ շինական հասկացությանը:

Սալուֆ բառի ստուգաբանությունը հաստատում է այս կոհանումը. արաբ. saluk բառի դիմաց բառարանները տալիս են՝ աղֆատ, շունեռ, քափառաշրջիկ, քնշագուրկ և այլն³⁷, որ լիովին ծածկում է քննվող արձանագրության մեջ սալուֆ-ի արտահայտած իմաստը:

Սալուֆ գրական աղբյուրներում չի ավանդված, այդ բառը չի հանդիպում նաև հայ բարբառներում, միայն Կարնո բարբառի և Աշտարակի շրջանի Բյուրական գյուղի խոսվածքներում պահպանվել է նույն բառը սալլուֆ, սալլուկ, սալլիկ արտասանությամբ, որ նույնպես նշանակում է խեղճ, աղֆատ, շունեռ, արհամարհված մարդ:

Մենում է ավելացնել, որ Սալուֆենց (<Սալուֆ) հավաքական անունը վկայված է Անիում, Աբղղարի Դահլավունու եկեղեցու Չիթականի մի արձանագրում. Ի քուփն: Չի: Ես: Մխիթար Շերասցի, որդի Ջուսիմի Սալուֆենց... Բերի զանգականիս եւ շինեցի զանգակատունս...³⁸: Սալուֆ անձնանունը այլուստ հայտնի չէ և չի ստուգաբանված, ուստի կարելի է կարծել, որ այստեղ հիշատակված Սալուֆենց հավաքականը ծագում է քննության առարկա սալուֆ բառից առաջացած անձնանունից:

Հարկ ենք համարում նշել, որ Մխիթար Շերասցու հիշյալ նվիրագրության նախկինում կատարված ընդօրինակությունում ի թիվս այլ վրիպումների բառանշատումը սխալ է կատարվել, որի հետևանքով ստացվել է ոչ թե Ջուսիմի Սալուֆենց (անձնանվան ուղիղ ձևը՝ Ջուսիմ <Ջուսիմ (ոս), այլ՝ Ջուսի (<Ջուս) Սիսալուֆենց, որը և այդ ձևով տեղ է գտել Աճառլանի բառարանում՝ իբրև անհայտ ծագումով անձնանուն³⁹: Բացի դրանից, սխալ է ընդօրինակված արձանագրության տարեթիվը՝ պարզ երևացող Չի կարդացվել է Չի:

Անիի արձանագրությունների վերջերս հրատարակված ժողովածուում Ջուսի Միսալուֆենց ընթերցումը շտկվել է՝ Ջուսիմի Սալուֆենց, սակայն այստեղ էլ թույլ է տրված ուրիշ, ավելի ցավալի անճշտություն. արձանագրության լուսանկարում և գծագրական ընդօրինակության մեջ հստակ երևացող Ջուսիմ տպագրվել և անձնանունների ցանկն է մտել իբրև Ջուսիմ⁴⁰:

НОВЫЕ ЭТИМОЛОГИИ И ДЕШИФРОВКИ В АРМЯНСКИХ НАДПИСЯХ

С. А. АВАКЯН

Резюме

В статье на основании уточненных дешифровок предлагаются этимологии социально-экономических и налоговых терминов—*սալաւնոց*, *բարաթ*, *դոնագիր*, *ձիաւախ*, *շորտալ*, *սալուք*, засвидетельствованные в армянской эпиграфике X—XIV вв. Термины *բարաթ*, *ձիաւախ*, *շորտալ*, *սալուք* установлены и объясняются впервые.

³⁷ Տե՛ս X. Կ. Բ а р а н о в, Арабско-русский словарь, էջ 553:

³⁸ Օրբելի, Դիվան, պր. 1, էջ 43:

³⁹ Հ. Ա ճ առ լ ա ն, Անձն. բառ., Բ, էջ 219, Կ. B a s m a d j i a n, նշվ. աշխ., էջ 218, արձ. 79:

⁴⁰ Հ. Օրբելի, Դիվան, պր. 1, էջ 43, 134: